ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

23.05.2019
342-39

ՀՀ Երևանի քաղաքապետ
պարոն Հայկ Մարությանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարության,

Ինֆորմացիայի ազատության կենտրոն են դիմել Արզումանյան 4 և Հալաբյան 13 շենքերի բնակիչները նշելով,որ Արզումանյան 4 հասցեում գտնվող երկու բնակելի շենքերի հարակից տարածքում, որը հանդիսանում է բնակիչների հանգստյան գոտի և խաղահրապարակ, կատարվում է շինարարություն: Շինարարությունը կատարող սեփականատերը փորձում է համոզել բնակիչներին, որ այն օրինական է, իսկ բնակիչները վստահ են, որ իրականացվող գործընթացն ապօրինի է:

Ուստի դիմում ենք Ձեզ՝ բնակիչների բարձրաձայնած հարցերի լիարժեք պատասխաններն ստանալու ակնկալիքով: Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Ու՞մ գերակա շահից ելնելով է վաճառվել նշյալ հողատարածքը:
2. Ե՞րբ և ո՞ր իրավական ակտի հիման վրա է Երևան Արզումանյան 4 հասցեում գտնվող շենքի հարակից ընդհանուր օգտագործման տարածքի նպատակային և գործառնական նշանակությունը փոխվել, արդյո՞ք այն համապատասխանում է Երևան քաղաքի գլխավոր հատակագծին և հայեցակարգին:
3. Ե՞րբ է կատարվել հողահատկացումը, որքա՞ն մակերեսով, ի՞նչ նպատակով, ի՞նչ իրավունքով և ի՞նչ ժամկետում:
4. Քաղաքաշինական ի՞նչ ծրագրային փաստաթղթերի հիման վրա է ընդունվել հողահատկացման վերաբերյալ որոշումը:
5. Կա՞ արդյոք ճարտարապետահատակագծային առաջադրանք, քաղաքաշինական փորձաքննության եզրակացություն և շինարարության թույլատվություն տվյալ շինարարության համար: Եթե այո, խնդրում ենք տրամադրել այդ հաստատված եզրակացության և թույլտվության պատճենները:
6. Արդյոք իրականցվե՞լ է հասարակության ծանուցում և քննարկում տվյալ տարածքում կենսագործունեության փոփոխություն ակնկալվող քաղաքաշինական գործունեության վերաբերյալ, եթե այո, ապա՝ ե՞րբ և ո՞ր լրատվամիջոցներով, ո՞ւմ մասնակցությամբ:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան